



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիս, 2022 թվականի № 35-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ 2021 թվականի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 30-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, և հաշվի առնելով օրենսդրորեն ամրագրված շրջանակներում հանրային հեռարձակողների գործունեության հրապարակային բնույթը, ինչպես նաև Հանրային հեռարձակողների 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ 2022 թվականի ապրիլի 28-ին աուդիտորական կազմակերպության կողմից տրամադրված աուդիտորական եզրակացության տվյալները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Մինչև 2022 թվականի մայիսի 16-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնել Հանրային հեռարձակողների 2021 թվականի գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ ճշգրտված հաղորդում՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

12 մայիս, 2022 թվականի

ք. Երևան